ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(14.10.2014թ կնքված N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀՎՁԲ-14/1 Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին)

ՀՀ, ք. Երևան **Երկու հազար քսան թվականի հոկտեմբերի տասնչորսին (14.10.2020թ.)**

<u>«ԱՐՄԵՆՄՈՏՈՐ» ՓԲ ընկերությունը</u>, այսուհետ՝ Վարձատու, (Գրանցման համարը 286.120.05217, ՀՎՀՀ 00401878, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացու փողոց թիվ 28), ի դեմս գլխավոր տնօրեն Հարություն Երվանդի Պողոսյանի (նույնականացման քարտ 000750919, տրված 02.12.2012թ-ին, 009-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, ք. Երևան, Ադմիրալ Իսակովի 54/2 շենք, բն. 31), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

<u>ՀՀ կադաստրի կոմիտեն</u>, իրավաբանական հասցեն ք. Երևան Արշակունյաց 7, ի դեմս գլխավոր քարտուղար Արթուր Թովմասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Դավիթ Հարությունի Բայրամյանը (նույնականացման քարտ 006245625, տրված 26.11.2017թ., 003-ի կողմից, հաշվառված ՀՀ ք. Երևան, Շնչենկոյի փողոց, տուն 25) այսուհետ՝ Վարձակալ, (Գրանցման համարը 01Բ001184, ՀՎՀՀ 02534328, Հասցե՝ ՀՀ., ք. Երևան, Արշակունյաց 7), այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով միմյանց միջև 14.10.2014թ.-ին կնքված N ՀՀ ԿԱԱ ԳԿՊԿ-ԲԸԱՀՎՁԲ-14/1 Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 10.1 կետը, 26.12.2014թ կնքված համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր 1) և 25.10.2019թ կնքված համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր 2).

կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր 3) հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ փոփոխում են.

   5.3 Գույքի վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 2020թ նոյեմբերի 20-ը՝ առանց Կողմերի միջև ծանուցման:

2. Վարձատուն երաշխավորում է, որ Պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը գրավի առարկա չի հանդիսանում, վաճառված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատում է ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից 14.10.2020թ-ին տրված ՄՏ-14102020-01-0289 միասնական տեղեկանքով:
3. Սույն պայմանագրի կնքմամբ կողմերը հավաստում են, որ համաձայն ՀՀ քաղ.օր 441 հոդվածի, սույն համաձայնագրի դրույթները կկիրառվեն 2020թ. հուլիսի 01-ից:
4. Մնացած մասերով Պայմանագրի բոլոր դրույթները թողնվում են անփոփոխ:
5. Կողմերի կողմից Համաձայնագրի կնքումը չի ենթադրում Պայմանագրի շրջանակներում սահմանված պատասխանատվության չափի և /կամ/ ծավալների փոփոխություն և /կամ/ նվազում:
6. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմից տրվում է մեկական օրինակ:
7. Համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
8. Սույն համաձայնագրի ժամկետի ավարտից հետո՝ դրանից ծագող իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման Կողմերից մեկի դիմումի հիման վրա:

ՎԱՐՁԱՏՈՒ՝

«ԱՐՄԵՆՄՈՏՈՐ» ՓԲԸ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացի 28
Հաշվարկային հաշիվ՝ 2050022341311001
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00401878

Գլխավոր տնօրեն՝ Հարություն Երվանդի Պողոսյան

ՎԱՐՁԱԿԱԼ՝

ՀՀ կադաստրի կոմիտե

Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Լիազորված անձ՝ Դավիթ Հարությունի Բայրամյան

Նոտարական ակտի կոդ: 443-20201016-117-4768493
Նոտարական ակտի գաղտնագիր: X3R1AF

երկու հազար քսան թվականի հոկտեմբերի տասնվեց սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ,,Երևան,, նոտարական տարածքի նոտար՝ Աշխեն Հարությունյանի կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի Կադաստրում 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն ՀՀ ՔՕ 301 հոդվածի: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում---------- 4216

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Աշխեն Ռոլանդի Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 հոկտեմբերի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Մ. Խորենացու փողոց 28

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր 14.10.2014թ. թիվ 5237, Համաձայնագրեր 26.12.2014թ. թիվ 6616, 25.10.2019թ. թիվ 5630, Համաձայնագիր կնքված 14/10/2020 թ-ին սմ-4216

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 21102020-01-0108, գաղտնաբառ՝ ZMIYL2E7J7WK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0309-0001-002-002	Գործարան	630.26 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագրի ժամկետը մինչև՝ 20/11/2020 թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արտակ Մելիքյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21102020-01-0108, գաղտնաբառ՝ ZMIYL2E7J7WK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե